

Հոկտեմբերի 15-ը՝ գյուղի կանանց միջազգային օրը



Գյուղի կանանց միջազգային օրը ՄԱԿ-ի պաշտոնական օրացույցում է հայտնվել Գլխավոր վեհաժողովի 2007 թ. դեկտեմբերի 18-ի բանաձևով, որում ընդգծվում էր գյուղի կանանց դերն ու ներդրումը գյուղատնտեսության զարգացման, պարենային անվտանգության ապահովման և աղքատության վերացման գործում: Պատահական չէ, որ այդ օրվան անմիջապես հաջորդող օրերին ՄԱԿ-ը նշում է՝ Պարենի համաշխարհային օրը՝ հոկտեմբերի 16-ին և Աղքատության վերացման միջազգային օրը՝ հոկտեմբերի 17-ին՝ այդպես ընդգծելով գյուղի կանանց առանձնակի դերը սննդի արտադրության և սննդի անվտանգության հարցում: Այս տարի շեշտադրվում է գյուղի կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնման խնդիրը՝ որպես կայուն զարգացման նպատակներից հասնելու վճռորոշ գործոն:

Ճանաչելով և գնահատելով գյուղի կանանց դերը



Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում զբաղված է հանրապետության աշխատանքային ռեսուրսների շուրջ 37,1-ը, որից 58,7%-ը կանայք են, ինչը կանանց դարձնում է գյուղատնտեսության զարգացման առավել կարևոր մասնակից: Ընդ որում, տղամարդկանց զբաղվածության կառուցվածքում գյուղատնտեսությանը բաժին է ընկնում 28,7%-ը, իսկ կանանց՝ 44,6%-ը: Ըստ էության, գյուղատնտեսական արտադրանքի մեծ մասը ստեղծվում է կանանց կողմից, և նրանք են սննդամթերքի մատակարարման և գյուղական վայրերում տնային տնտեսությունների գոյատևման հիմնական երաշխավորները:

Փաստեր քաղի և կանանց մասին

- Կանայք հաճախ են դառնում քաղցի զոհ, սակայն նրանք նաև առանցքային դեր ունեն քաղցի դեմ պայքարում: Չարգացող երկրներում տնտեսապես ակտիվ կանանց 79%-ը զբաղված է գյուղմթերքի արտադրությամբ:
- Կին ֆերմերներին ավելի շատ ռեսուրսներ տրամադրելով՝ հնարավոր է աշխարհում 100-150 միլիոնով կրճատել քաղցած մարդկանց թիվը:
- Թերսնման պայմաններում ապրող մարդկանց 60%-ը կանայք և աղջիկներ են:
- Ողջ աշխարհում կերակուր պատրաստելու վրա տնային տնտեսությունների ծախսած ժամանակի 85-90%-ը ընկնում է կանանց:
- Կրիտիկական իրավիճակներում սովորաբար կանայք առաջինն են կրճատում ընդունվող սննդամթերքի քանակը, որպեսզի իրենց ընտանիքները կարողանան բնականոն սնվել:
- Կանանց կրթությունը 43%-ով կրճատում է երեխաների թերսնման վտանգը:

Կիսեր և քաղաքականություն

«Եկեք բոլորս հարց տանք՝ որքանով է մեր սնունդն անվտանգ»



2015 Ն³ i áõĬ Āáõ³ ñĬ áõĬ

²Ýí ×³ ñ Ĭ³ í »Ēí³ Í www.WomenNet.am



Լուսանկարը՝ Օքսֆամի

Ĭ³ Ý³ Ýó · Ĭáõõ³ Ĭ ÝĬ »ë³ Ĭ³ Ý Ĭááá»ñ³ Ĭ Հի Ý»ñ

«Աշխատանքից չենք վախենում»

Այս համարի բոլոր հերոսուհիները գյուղի այն կանայք են, ովքեր ներգրավված են Օքսֆամի կողմից տնտեսական արդարության ծրագրերի շրջանակներում Տավուշի մարզում ստեղծված գյուղատնտեսական կոոպերատիվներում: Նրանցից շատերն արդեն իսկ հասել են հաջողությունների, մի մասն էլ նոր է սկսում՝ նոր հույսերով և ակնկալիքներով: Մեկի համար կոոպերատիվում աշխատելը ընտանիքի գոյատևման միակ աղբյուրն է, մյուսի համար՝ ընտանիքին անհրաժեշտ հավելյալ եկամտի հնարավորություն: Բոլորին սակայն միավորում է հաջողության ամենակարևոր գրավականը՝ «աշխատանքից չենք վախենում» սկզբունքը:

Օքսֆամի հայաստանյան մասնաճյուղի ղեկավար Մարգարիտա Հակոբյանի ներկայացմամբ՝ դեռ 2010-ից են սկսել ֆերմերներին ներգրավել կոոպերատիվների մեջ: Աշխատում են Տավուշի և Վայոց ձորի մարզերում և մինչ օրս ստեղծել են 25 կոոպերատիվ, որոնց անդամների 54%-ը կանայք են:

Մարգարիտա Հակոբյանի խոսքով՝ կոոպերատիվների միջոցով շատ խնդիրներ են լուծվում. սոցիալական ձեռնարկության գաղափարն է կյանքի կոչվում, վարկերի հասանելիությունն է ապահով-

վում, մարդկանց մեջ հույս է արթնանում, միգրացիան է կանխվում, ինչը հատկապես կարևոր է սահմանամերձ շրջաններում:

Օքսֆամի առաջարկած նորարարական մոտեցումներից մեկն էլ կանանց կոոպերատիվների ստեղծումն էր: Այսօր արդեն Տավուշում և Վայոց ձորում 8 կանանց կոոպերատիվներ են գործում:

«Մեր փորձը ցույց տվեց, որ այս կոոպերատիվներն ավելի կենսունակ են, կանայք ավելի նախաձեռնող են, ավելի պատասխանատու ու պարտաճանաչ և սոցիալական արդարության սկզբունքն ավելի

լավ են պահպանում, քան երբ կոոպերատիվը ղեկավարվում է տղամարդու կողմից: Փորձը նաև ցույց է տալիս, որ տղամարդ ղեկավարն ավելի է տարածում իր իշխանությունն այլ անդամների վրա, առաջնահերթ են դառնում ամենական շահերը, և սոցիալական արդարության, հաշվետվողականության սկզբունքը հետին պլան է մղվում: Կարծում են՝ եթե ավելի շատ ջանքեր և ռեսուրսներ ներդրվեն կոոպերատիվի այս մոդելի (որը, ի դեպ, սոցիալական բաղադրիչ ունի) զարգացման ուղղությամբ, ապա այն կարող է դառնալ իսկապես աշխատող ու հեռանկարային մոդել հանրապետության շատ գյուղերի համար», - ասում է նա՝ նշելով, որ կոոպերատիվներն այսօր կարևորվում են ոչ միայն Օքսֆամի մակարդակով, այլև կառավարության մշակած քաղաքականություններում և ռազմավարություններում, որոնք ուղղված են կոոպերատիվների խթանմանը:

Ճարունակությունը՝ էջ 2

Ĭ³ ĬáõÝ ½³ ñ. ³ óĬ³ Ý Ýáñ ùñ³ Ĭ³ ñ.

Սեպտեմբերի 25-ին Նյու Յորքում ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի շրջանակներում բացված Կայուն զարգացման գազաթնաժողովում պաշտոնապես ընդունվեց կայուն զարգացման նոր օրակարգի ամփոփիչ փաստաթուղթը, որի խորհուրդն արտահայտված է խորհրդանշական հինգ «Ք»-երի մեջ՝ people (բնակչություն), planet (մուղտակ), prosperity (բարգավաճում), peace (խաղաղություն) և partnership (գործընկերություն):



«Վերափոխելով մեր աշխարհը. Կայուն զարգացման օրակարգ-2030» վերնագրով այս փաստաթղթի նախաբանում ասվում է. «Մենք լի ենք վճռակամությամբ՝ մարդկությունն այս սերնդի ընթացքում ազատելու աղքատության ճիրաններից, և ցանկանում ենք առողջացնել ու պահպանել մեր մուղտակը ներկա և ապագա սերունդների համար... Այս համատեղ առաքելության մեկնարկին մենք խոստանում ենք, որ ոչ մեկը չի անտեսվի»:

ՄԱԿ-ի անդամ 193 պետությունների համաձայնությամբ ընդունված այս փաստաթղթում ամրագրված են կայուն զարգացման 17 նպատակները, որոնք ուղղված են աղքատության վերացմանը, անհավասարության և անարդարության դեմ պայքարին, կլիմայի փոփոխության խնդիր լուծմանը: Կայուն զարգացման նոր նպատակները գալիս են փոխարինելու 2000 թ. ընդունված Հազարամյակի զարգացման ութ նպատակներին և նախատեսված են մինչև 2030 թվականը: Դրանցից առավել հավակնոտն առաջինն է հինգն են՝

- Նպատակ 1. Ոչ աղքատությունը.** - մինչև 2030 թվականը ամենուրեք վերացնել աղքատությունը՝ իր բոլոր ձևերով ու դրսևորումներով
- Նպատակ 2. Ոչ սովին.** - վերացնել սովը, հասնել պարենային ապահովության ու բարելավված սնուցման, խթանել գյուղատնտեսության կայուն զարգացումը
- Նպատակ 3. Առողջություն.** - ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից
- Նպատակ 4. Որակյալ կրթություն.** - ապահովել ներառական ու որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորություններ
- Նպատակ 5. Գեղեցիկ հավասարություն.** - հասնել գեղեցիկ հավասարության՝ կանանց և աղջիկների հնարավորությունների ընդլայնման և նրանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերն իսպառ վերացնելու միջոցով:

ՍՅՈՒՆ ԻՇԿԱ և ՍՅՈՒՆ ԻՅ ԿՅՈՒՆ

Հայաստանի բնակչության սնունդի վիճակը. հետազոտություն

«Հայաստանի բնակչության սնունդի վիճակը» (APR Group) կազմակերպությունը Օքսֆամ հայաստանյան մասնաճյուղի հետ համագործակցությամբ հետազոտություն է անցկացրել Հայաստանի բնակչության սնունդի վիճակի վերաբերյալ: Հարցումը կատարվել է 1600 տնային տնտեսությունների շրջանում Հայաստանի բոլոր 10 մարզերում և մայրաքաղաք Երևանում:



Ուսումնասիրությունը իրականացվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Պարենային անվտանգություն» ծրագրի շրջանակներում և այժմ գտնվում է նախնական արդյունքների ամփոփման փուլում:

Սննդի և եկամուտների մասին

Ըստ հետազոտության նախնական արդյունքների՝ հարցվածների 46,4%-ը նշել է, որ անցած 12 ամիսների ընթացքում եղել են ամիսներ, երբ սնունդը չի բավարարել իրենց ընտանիքին: Առավել հաճախ, ըստ հարցվածների, դա եղել է փետրվար (58,3%), մարտ (68,5%) և ապրիլ (57,6%) ամիսներին: Նշենք, որ հարցվածների գերակշիռ մասը՝ 70%-ը, նշել է, որ իրենց տնտեսությունների միջին ամսական եկամուտը եղել է 200 հազար դրամից ցածր, մասնավորապես, 29,6%-ի մոտ այն շուրջ 100-200 հազար դրամ է կազմել, 27%-ի մոտ՝ շուրջ 54-100 հազար դրամ և 13,8%-ի մոտ՝ մինչև 54 հազար դրամ:

Հարցվածների 49%-ը նշել է, որ անցյալ տարվա համեմատ սննդի վրա ծախսվող գումարն աճել է, իսկ 26,1%-ի դեպքում մնացել է անփոփոխ, և դա այն դեպքում, երբ նույն ժամանակահատվածում 39,1%-ի մոտ եկամուտները նվազել են, 45,5%-ի մոտ չեն փոխվել: «Լինում է այնպես, որ սնունդը գնեք պարտքով» հարցին 17,8%-ը նշել է՝ գրեթե միշտ, 16,9%-ը՝ շատ հաճախ, 13,8%-ը՝ երբեմն, 9,2%-ը՝ հազվադեպ և միայն 36,6%-ը՝ երբեք:



Բնութագրելով իրենց տնտեսության իրավիճակը՝ 27,4%-ը նշել է, որ դրամը չի բավականացնում անգամ սննդի համար, 40,7%-ը՝ դրամը բավականացնում է միայն սննդի համար, բայց ոչ հագուստի, և միայն 23,6%-ի դեպքում դրամը բավական է սննդի և հագուստի համար, բայց ոչ տևական օգտագործման ապրանքներ գնելու համար: Ոչ միայն կենցաղային սարքեր, այլև կահույք կարող են իրենց թույլ տալ գնել հարցվածների միայն 1,4%-ը, իսկ թանկարժեք ավտոմեքենա, բնակարան և այլն՝ 0,3%-ը:

Սանիտարահիգիենիկ պայմանների և բուժավորումների մասին

Հարցվածների 86,4%-ը նշել է, որ վաճառում է իր ձեռքերը օրական 8 և ավելի անգամ, գրեթե միշտ օճառ է օգտագործում 72,2%-ը: Պրահետ մեկտեղ մշտական ջրամատակարարում ունի հարցվածների միայն 69,6%-ը: Տան բոլոր կարիքները հոգալու համար ջուրը երբեք չի բավարարում հարցվածների 15,3%-ին:

Հարցվածների 2,3%-ը խմում է ցիստեռնով բերվող ջուր, 2,8%-ը՝ աղբյուրի ջուր, 1,6%-ը՝ ջրհորի, 2,56%-ը՝ շշպղկած, 1,9%-ը՝ ծորակի ֆիլտրած և 87,6%-ը՝ ծորակի սովորական:

«Ձեզ մոտ երբևէ եղել է սննդային բուժավորումներ» հարցին 89,2%-ը պատասխանել է՝ երբեք, 6,6%-ը՝ մի քանի տարին մեկ, 3,4%-ը՝ տարին մեկ-երկու անգամ:

«Ի՞նչ հետևություններ եք արել սննդային բուժավորումից հետո» հարցին հարցվածների 4,76%-ը նշել է, որ դադարել է որոշակի սննդատեսակներ ուտելուց, 3,6%-ը ոչ մի փոփոխություն չի արել սննդակարգում, 0,3%-ը սկսել է ավելի ուշադիր կարգապահ սննդի պիտակները, 0,3%-ը դադարել է սկսել որոշակի վայրերում (օրինակ՝ ռեստորանում, սրճարանում), 0,1%-ը փոփոխել է սննդի պատրաստման եղանակը, 0,1%-ը դադարել է ծորակի ջուր խմելուց:

«Աշխատանքից չեն վախենում»

Սկիզբը՝ էջ 1

Անդրադառնալով կանանց կոոպերատիվներին՝ Օքսֆամ հայաստանյան մասնաճյուղի տնտեսական արդարության ծրագրերի պատասխանատու Արթուր Գոմկյանը, իր հերթին, նշում է, որ դրանք ավելի կազմակերպված են, թափանցիկ են աշխատում, լավ արդյունքներ են ունենում, ի տարբերություն և կանանցով, և՛ տղամարդկանցով համարված կոոպերատիվների, որոնք հաճախ երկու խնդրի առջև են կանգնում: «Նախ՝ կանայք մեծ մասամբ հետ են կանգնում և գրեթե չեն մասնակցում որոշումների կայացման գործընթացին, ու խնդիրն այն է, որ տղամարդիկ են նպատակ դրան, այլ ինքնակամ գործընթաց են գնում՝ պայմանավորված ավանդական մոտեցումներով: Երկրորդ խնդիրն այն է, որ տղամարդիկ ավելի պրակտիկ են, և եթե մեկ-երկու անգամ ակնկալվող արդյունքը չեն տեսնում, ավելի շուտ են հիասթափվում», - ասում է նա:

Կոոպերատիվներում ներգրավված կանանց հետ զրույցները ցույց են տալիս, որ կոոպերատիվները զգալի ու կարևոր փոփոխություններ են բերում նրանց կյանքում ու կարգավիճակում: Կանանց ինքնագնահատականն է զգալիորեն բարձրանում, համայնքում նրանց ձայնը լսելի է դառնում, քաղաքացիական դիրքորոշում է ձևավորվում: Հեղինակությունը ձեռք բերելով համագյուղացիների շրջանում՝ նրանք փորձում են իրենց իսկ համայնքների կյանքը փոխելու նպատակով առաջադրվել ՏԻՄ-երում:

Բացի այդ, կանայք նշում են, որ Օքսֆամի գործընկերների՝ Բիզնեսի աջակցման կենտրոնի (BSC) և «Բանջարաբուստանային և տեղական կազմակերպության մշակակառուցման կենտրոնի» կազմակերպած վերապատրաստումների, խորհրդատվությունների շնորհիվ ստացված գիտելիքներն ու հմտությունները մնայուն արժեք են իրենց համար՝ նույնիսկ աջակցման

ծրագրերն ավարտվելուց հետո: Դրանց միջոցով գյուղատնտեսական նոր, ժամանակակից տեխնոլոգիաներ են մտնում գյուղ՝ բարձրացնելով արդյունավետությունը և ապահովելով արտադրված սննդամթերքի էկոլոգիական մաքրությունը:

«Կոոպերատիվը փոքր ֆերմերների համար միակ ճիշտ կառույցն է, որը համախմբելով ֆերմերներին ընդհանուր խնդիրների շուրջը, հնարավորություն է տալիս փոխառաջադրել լուծումներ գտնելու: Կոոպերատիվի ստեղծման կարևորագույն հիմքերից առաջինը ընդհանուր շահի, բարի կամ արևելայությունն է և ֆերմերի կողմից համագործակցության պատրաստակամությունը», - ասում է Օքսֆամ հայաստանյան մասնաճյուղի տնտեսական արդարության ծրագրերի ղեկավար Վաղին Ուզունյանը՝ նշելով, որ կանայք, կարծես թե, ավելի հեշտությամբ են համախմբվում և մեկ ընդհանուր որոշում ընդունում:

«Մեր գյուղի կանանց կոոպերատիվը բարձրացրեց է կոստում»

«Մենք կարողացանք ապացուցել, որ կանայք ոչ միայն կարող են լավ կին և մայր լինել, այլև շատ հաջողակ ֆերմերներ, ինչը շատերին է ոգեշնչում, և նրանք հետևում են մեր օրինակին», - ասում է Սարիգյուղի կոոպերատիվի ղեկավար Լուիզա Ռևազյանը:



Լուիզան ժամանակին գերազանցությամբ է ավարտել դպրոցն ու համալսարանը և այժմ աշխատում է իր հարազատ գյուղի դպրոցում որպես համակարգչային ուսուցման մասնագետ: Պատրաստվում է դիմելու դպրոցի տնօրենի պաշտոնի համար: Լուիզան նախաձեռնում է եռամսյակին կին է, ի տարբերություն գյուղի շատ կանանց՝ մեքենա է վարում, կարծես, ամբողջ իր կերպարով կոտրելով կարծրատիպերը:

- Ես ինձ ընդհանրապես չեմ պատկերացնում առանց աշխատանքի, միշտ ձգտում եմ սովորել, սկսել ինչ-որ նոր բան: Համոզված եմ, որ կյանքում չես կարող որևէ բանի հասնել առանց չարչարվելու, - ասում է Լուիզան:

2014-ին լսելով հարևան Սկար գյուղում հաջողությամբ գործող կոոպերատիվի մասին՝ հենց Լուիզան կապվեց Օքսֆամի ներկայացուցիչների հետ և աջակցություն խնդրեց Սարիգյուղում կոոպերատիվ հիմնելու համար: Ստանալով նախնա-

համար: Կոոպերատիվի թիմը մի մեծ ընտանիք է դարձել մեզ համար, որտեղ մենք կիսվում ենք մեր դժվարություններով և հաջողություններով: Մարդկանց վստահությունը մեր ամենամեծ ձեռքբերումն է:

Սարիգյուղը սահմանակից է Արթրեջանին: Այն գրեթե քանդվել էր պատերազմի ընթացքում, և այսօր էլ կրակոցներ են հնչում այստեղ:

- Կյանքը խաղաղ չէ մեզ մոտ, սակայն մենք սովորել ենք դրան: Փորձում ենք ապրել վտանգի մեջ՝ արհամարհելով այն ու զբաղվելով մեր աշխատանքով, որը մեզ համար շատ կարևոր է և անհրաժեշտ: Եթե այն հաջողություն ունենա, մարդիկ կնստան գյուղում: Կոոպերատիվը մի մար հնարավորություն էր մեզ համար: Օքսֆամի և իր գործընկերների կազմակերպած վերապատրաստումների շնորհիվ կարողացել ենք առցանց կապ հաստատել այլ ֆերմերների հետ և մասնակցել մտացանց ֆորումների: Այս տարի նախատեսում ենք աճեցնել 2-3 տոննա լոլիկ և հույս ունենք ծախել բերքը հնարավորինս եկամտաբեր ձևով, - ասում է Լուիզան՝ նշելով, որ կարողացել են նաև լավ հարաբերություններ հաստատել համայնքի ղեկավարության հետ, որը հաշվի է մտնում իրենց կարծիքի հետ, իրենք էլ, իրենց հերթին, պլանավորել են աջակցել գյուղի խնդիրների լուծմանը:

«Ես ինքնա կյանքի նոր փուլ թևակոխեցի»

Մինչև ամուսնանալը Սարիգյուղում որպես ուսուցչուհի: Այժմ ապրում է Սարիգյուղում, դասավանդում գյուղի դպրոցի տարրական դասարաններում և շատ ակտիվ ներգրավված է կանանց կոոպերատիվի աշխատանքներում: Ասում է՝ գյուղի կյանքին հարմարվելը սկզբում շատ բարդ էր և ոչ միայն այն պատճառով, որ երբեք չէր զբաղվել գյուղատնտեսական աշխատանքներով, այլև որ հայտնվեց հայրիշխանական ընտանիքում:



- Այստեղ կանանց շատ բաներ չեն թույլատրվում: Ինքնուրույն որոշում կայացնելը ընդունված չէ, սովորաբար ամուսիններն են որոշում՝ ինչ պետք է անել և երբ: Օրինակ՝ մենք դեպքեր ենք ունեցել մեր կոոպերատիվում, երբ ամուսինները թույլ չեն տվել կանանց նույնիսկ երևան գնալ սեմինարների: Այնուամենայնիվ, մոտեցումներն աստիճանաբար փոխվում են, և նույն այդ ամուսինները հասկանում են, որ կոոպերատիվում աշխատանքը ստեղծում է եկամուտ և ընտանիքի որոշակի բարեկեցության մակար-

դակ, և այլևս չեն արգելում իրենց կանանց աշխատել կոոպերատիվում: Ես կասեի, որ կյանքը ինքն է թելադրում նոր կանոններ: Մեր օրերում, երբ շատ տղամարդիկ ստիպված են արտագնա աշխատանքի մեկնել, կանայք են ստանձնում ողջ ընտանիքի պատասխանատվությունը և գլխավորում ընտանիքը: Իմ փորձը ցույց է տալիս, որ կանայք այդ դերում ավելի վստահ չեն, քան տղամարդիկ, և հաճախ նույնիսկ գերազանցում են նրանց տնտեսության ռազմունակ կազմակերպման հարցում: Ես ինքս էլ կյանքի նոր փուլ թևակոխեցի, երբ միացա կոոպերատիվին: Բացի եկամուտն ավելացնելու հնարավորություններից և բանջարեղեն մշակելու նոր հմտություններ ձեռք բերելուց, լավացել են հարաբերություններն իմ ընտանիքում, իմ ամուսինը սկսել է կարծիքս հաշվի առնել, ինչպես նաև խորհուրդներս հետևել: Մի քանի տարի առաջ, երբ համագյուղացիներն ինձ առաջարկեցին թեկնածություն առաջադրել գյուղապետի պաշտոնի համար, ամուսինս դեմ էր: Կարծում եմ հիմա, երբ մեր կոոպերատիվը հաջողություններ է գրանցում, նա դեմ չի լինի:

«Ամենակարևոր արժեքն այն հույսն է, որ արթնացավ մեր մեջ»

Գայանե Ամիրջանը Այգեհովիտի կոոպերատիվի ակտիվ անդամներից մեկն է: Ասում է՝ ես երջանիկ կին եմ, իմ ընտանիքն ապրում է խաղաղության և ներդաշնակության մեջ, երեխաներս առողջ են, և այժմ մենք մեր նախաձեռնություն ենք սկսում՝ գյուղատնտեսական կոոպերատիվը: Բոլոր նախապատրաստական աշխատանքներն ավարտված են, շուտով ջերմոցը կհիմնվի, և մենք կսկսենք մշակաբույսերի սածիլներ տնկել:



- Մեր սահմանամերձ գյուղում մարդիկ հարուստ չեն, և ապրուստ վաստակելն այստեղ հեշտ չէ: Շատ քիչ տղամարդ է մնացել գյուղում: Նրանք էլ, ովքեր մնացել են, ծեծեր են: Երիտասարդ տղամարդիկ գնում են Ռուսաստան աշխատելու և երբեմն ընտանիքներին տանում են իրենց հետ: Ես ու իմ ամուսինն էլ ենք անցել դրա միջով. սկզբում ամուսինս

տղամարդը, որ աշխատում է այնտեղ, ղեկավարն է, ով ընտրվել է իր կառավարման հմտությունների, լայնախոհության ու ազնիվ բնավորության համար: Նա հարգում է կանանց: Կոոպերատիվի մյուս 9 անդամները կանայք են: Կանայք մեր գյուղի հիմնական աշխատուժն են, այնպես որ, ինչն էր պետք աջակցել: Այսօր նրանց կայուն եկամտի աղբյուր ունեն, սակայն այս գործոնը հավանաբար ամենակարևորը չէ: Ամենակարևոր արժեքն այն հույսն է, որ արթնացավ մեր մեջ: Մենք սկսեցինք հավատալ մեր ուժերին, համոզվեցինք, որ մեր համատեղ աշխատանքը կաջակցի ոչ միայն մեր ընտանիքներին, այլև ողջ գյուղական համայնքին: Եթե ամեն ինչ լավ ընթանա, պլանավորում ենք շահել եկամտի 10-15%-ը գյուղի մանկապարտեզին, որտեղ 70 երեխա է հաճախում:

Ասում է, երբ անցյալ տարի լսեցին Օքսֆամի աջակցությամբ ստեղծվող կոոպերատիվի մասին, մտածեցին, որ դա հենց այն հնարավորությունն է, որին այդքան սպասում էին, ինչպես գյուղացիների հետ, գտան համակիրներ, որ պատրաստ էին անդամակցելու կոոպերատիվին և սկսել աշխատել: - Մեր կոոպերատիվը կանանց կոոպերատիվ չէ, սակայն միակ

Ծ³ çáÕáóÃ Û³ Ý ì³ Ý³ Ó»õ

«Ես առանց վարանելու միացա նախաձեռնությանը»



Սեդա Ճաղարյանը վերջերս Գետահովիտ գյուղում հիմնված նոր կոոպերատիվին անդամակցելով՝ իր ընտանիքին անհրաժեշտ հավելյալ եկամուտ ստանալու հնարավորություն է տեսնում: Ամբողջ կյանքում Գետահովիտում է ապրել, երկար տարիներ աշխատել է Իջևանի գինվորական դատախազությունում, սակայն դուրս ելել գրասենյակի վերակառուցման հետևանքով: Ամուսինը նախկին ոստիկան է: Սեդան մեծ ընտանիք ունի, ընտանիքի ամենամեծ անդամը 80 տարեկան է, ամենափոքրը՝ 6 ամսական: Բոլորն ապրում են մեկ տան մեջ՝ Սեդան, ամուսինը, սկեսուրը ու սկեսրայրը: Ունի երկու որդի, երկու հարս և երկու թոռ: Ինչպես գյուղի տղամարդկանց մեծ մասը, Սեդայի որդիներն արտագնա աշխատանքի են մեկնում՝ մեկը՝ Ղազախստանում է, մյուսը՝ Ռուսաստանում: Սեդայի ընտանիքը շատ համերաշխ է և աշխատասեր:

Մեր տնտեսությունը որոշ առումով լավ է, մենք անասուն ենք պահում, կաթնամթերք մշակում և ծախում Իջևանի խանութներում: Մեր ընտանիքի մեծերը մեծ մասամբ դրամով են զբաղվում, չնայած տարիքի հետ կապված դժվարություններ են ունենում: Այնուամենայնիվ, ես ստիպված եմ մտածել մեր մեծ ընտանիքի համար հավելյալ եկամուտ ստանալու նոր ճանապարհների մասին: Երեխաները մեծանում են, տունն արդեն փոքր է բոլորին տեղավորելու համար: Երազում ենք մի քիչ գումար տնտեսել և նոր տուն կառուցել մեր ավագ որդու համար: - Մենք շատ մեծ ակնկալիքներ ունենք կոոպերատիվի գործունեությանը: Մտածում ենք՝ սկզբում տնկել փոքր քանակով տարբեր բանջարեղեն և տեսնել, թե որ բանջարեղենի դեպքում է առատ բերք ստացվում, որն ավելի լավ կվաճառվի, և ինչ սպառման շուկաներ գոյություն ունեն: Օբսֆամի անցկացրած վերապատրաստման արդյունքում ստացված մարկետինգի վերաբերյալ գիտելիքները, անշուշտ, կօգնեն մեզ առևտրի հարցում: Շատ լավ կլինի, եթե կարողանայինք հետագայում սառնարան և արևային չորացման սարք գնել: Շատ բան կախված է նրանից, թե ինչպես պետք է բաշխենք դերերն ու պատասխանատվությունը կոոպերատիվում: Կարծում եմ՝ կանենք այնպես, ինչպես ընտանիքում է արվում: Ամեն մարդ պետք է զբաղվի նրանով, ինչ իր մոտ լավ է ստացվում: Օրինակ՝ ես հավանաբար կզբաղվեմ առևտրի և մարկետինգի հարցերով, քանի որ կոնկրետ փորձ ունեմ տնտեսության արտադրանքը վաճառելու, լավ եմ առնչվում հաճախորդների հետ և վաճառում մեր կաթնամթերքը: Կոոպերատիվն ունի 11 անդամ, որից 9-ը կին են: Բոլորս մույն թաղամասում ենք ապրում և վստահում ենք իրար: Ես համոզված եմ, որ հաջողության կհասնենք, որովհետև մեզնից ոչ ոք աշխատանքի չի վախենում, և, որ ամենակարևորն է, գյուղապետարանի աջակցությունն ունենք:

Երբ գյուղացիները լսեցին կոոպերատիվի մասին, նրանցից շատերը չհամարձակվեցին միանալ այս նախաձեռնությանը: Սակայն ես առանց վարանելու անդամագրվեցի:

«Կարևորը՝ լսեն մարդկանց և արձագանքեն նրանց կարիքներին»

Գյուլվարդ Եղիազարյանը, ով Գետահովիտում հիմնված կոոպերատիվի ամենատարեց անդամն է, չնայած իր տարիքին՝ շատ գործունյա և կենսուրախ անձնավորություն է: 27 տարի շարունակ ծխախոտ է աճեցրել, այժմ թռչակի է անցել, բայց շարունակում է օգնել իր ընտանիքին:



ները համայնքում: Մեր գյուղի 11 ընտանիք անմիջական օգնություն կստանան կոոպերատիվի գործունեությունից, և 10-15 ընտանիք՝ Օբսֆամի շահառու հանդիսացող կողքի գյուղերում, բայց Հայաստանի շատ այլ գյուղեր դեռևս կարիքի մեջ են: Դրա համար, կարծում եմ՝ կառավարությունն էլ պետք է գյուղական վայրերում մարդկանց խթանելու համար աջակցման ծրագրեր իրականացնի: Առանց դրա մարդիկ կլքեն գյուղը, հատկապես երիտասարդները: Իմ երկու որդիները, օրինակ, դեռևս գյուղում են ապրում, սակայն մշտական աշխատանք չունեն: Դրա պատճառով նրանք ցանկանում են գնալ, և ես նրանց հազիվ եմ համոզում մնալ: Կարևորը՝ լսեն մարդկանց և արձագանքեն նրանց կարիքներին: Ես ուշադրությամբ հետևում եմ երկրի զարգացումներին հեռուստատեսությամբ և թերթերով, և տպավորություն եմ ստանում, որ ամենուր մարդկանց ծայրը լսելի չէ, ու նրանց կարիքներն անտեսված են: Դա լավ չէ: Հայաստանի 2 միլիոն բնակչության գրեթե կեսը գյուղում է ապրում: Եթե ամեն ինչ խելացի ձևով կազմակերպել, մարդիկ կարող են կայուն եկամուտ ստանալ, ընդամենը պետք է նրանց մի փոքր խթանել: Կարծում եմ՝ Օբսֆամի օրինակը պետք է տեղայնացվի շատ գյուղական վայրերում՝ աղքատ մարդկանց կյանքը բարելավելու համար:

Աշխատեմ էնքան, ինչքան իմ ուժն ու էներգիան կրթականացնեն դրա համար: Ցանկանում եմ փոխանցել իմ փորձն ու գիտելիքը ավելի երիտասարդներին: Երբ լսեցի կոոպերատիվի մասին, իմ առաջին միտքը դրան մասնակցելն էր: Նախաձեռնությունը նոր էր երիտասարդ սերնդի համար, բայց ես որոշ նմանություններ եմ տեսնում կոոպերատիվների և սովետի ժամանակվա կոոպերատիվների միջև, առաջին հերթին՝ մարդկանց կրթելով աշխատանքի առումով: Վստահ եմ, որ աշխատանքը կոոպերատիվում ոչ միայն կմեծացնի եկամուտը, այլ նաև կամրապնդի հարաբերությունները համայնքում:

«Կանացի» և «Տղամարդկանց» աշխատանքների բաժանում չենք անում»

Անահիտ Վերանյանը 52 տարեկան է: Առևտրի մասնագետ է, բուհն ավարտելուց հետո ցանկանում էր մնալ Երևանում, բայց չստացվեց, վերադարձավ հայրենի Գոշ գյուղ, տեղավորվեց խանութում աշխատելու և շուտով ամուսնացավ: Շատ դժվար կյանքով էին ապրում՝ ունեին և՛ առողջական, և՛ նյութական խնդիրներ, բայց կարողացան դիմակայել լավատեսության շնորհիվ:

Անահիտը նաև ասում է, որ շատ է զնահատում իր ամուսնու օգնությունը տնային գործերում, երբ ջերմոցում զբաղված է լինում: - Ընդհանրապես, կարծում եմ, թույլ և փխրուն լինելը մեծ շքեղություն է կանանց համար: Կանայք պետք է շատ ուժեղ լինեն, որպեսզի հաղթահարեն ընտանիքի և գյուղի կյանքի մարտահրավերները: Կոոպերատիվը հզորացնում է մեր կանանց և ամուսնու միջև տնտեսական և սոցիալական կարգավիճակը:

Անահիտը ձեռներեց է, գյուղում երկու խանութ ունի, բայց եկամուտը շատ ցածր է, քանի որ մարդիկ աղքատ են և ապրանք են առնում՝ հետագայում վճարելու պայմանով, երբեմն էլ՝ ընդհանրապես չեն վերադարձնում իրենց պարտքերը: Դրա համար Անահիտը ստիպված էր եկամտի ուրիշ աղբյուր փնտրել և, լսելով գյուղում ստեղծվող կոոպերատիվի մասին, անմիջապես միացավ նախաձեռնությանը: - Մեկ տարի է անցել այն սկզբնական հանդիպումից, երբ համագյուղացիներով քննարկում էինք Օբսֆամի աջակցությամբ նոր կոոպերատիվ հիմնելու և ջերմոց կառուցելու հարցը: Հիմա արդեն կոոպերատիվը լավ գործում է 12 անդամներով (6 կին, 6 տղամարդ), ովքեր ընկերական թիմ են ձևավորել: «Կանացի» և «տղամարդկանց» աշխատանքների բաժանում չենք անում, տղամարդիկ մեզ հետ միասին ցանում և բերք են հավաքում: Համայնքը հարգում է մեզ, իսկ գյուղապետարանը՝ աջակցում: Մեր աճեցրած բանջարեղենն ու կանաչեղենը քաղաքի

«Եկամտից բացի ես մեծ հաճույք եմ ստանում կոոպերատիվում աշխատելով: Իմ հոգին հանգստանում է, երբ ես ջերմոցում բույսեր եմ խնամում: Առավոտյան շտապում եմ «հանդիպել» իմ բույսերին և «խոսել» նրանց հետ. նրանք երեխաների պես ուշադրություն և խնամք են պահանջում»:



Անահիտը նաև ասում է, որ շատ է զնահատում իր ամուսնու օգնությունը տնային գործերում, երբ ջերմոցում զբաղված է լինում: - Ընդհանրապես, կարծում եմ, թույլ և փխրուն լինելը մեծ շքեղություն է կանանց համար: Կանայք պետք է շատ ուժեղ լինեն, որպեսզի հաղթահարեն ընտանիքի և գյուղի կյանքի մարտահրավերները: Կոոպերատիվը հզորացնում է մեր կանանց և ամուսնու միջև տնտեսական և սոցիալական կարգավիճակը:

«Մենք գգում ենք, որ մեր կյանքը նշանակալիորեն փոխվել է»



Նելլի Օրդինյանը՝ Ենոքավանի կոոպերատիվի ղեկավարը, երկու մասնագիտություն ունի՝ բանասիրություն և կառավարում: Դասավանդման 22 տարվա փորձ ունի և այժմ ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի է գյուղի դպրոցում: Նելլիի ընտանիքը բաղկացած է ամուսնուց, սկեսրոջից և երկու երեխաներից, և չնայած իրենց աղքատ չեն համարում, լրացուցիչ եկամտի աղբյուրի կարիք ունեն:

Գյուղում հիմնված կոոպերատիվում արդեն երկրորդ տարին է, ինչ աճեցնում են լուրի, բիրբար, չիլի բիրբար: - Գյուղի կյանքը հագվաթեպ է հնարավորություններ ընձեռում աշխատանքի որևէ բնագավառում նոր հեռանկարների հասնելու համար: Իսկ կոոպերատիվն այդ հնարավորությունը տալիս է, դրա համար էլ անմիջապես ընդունեցի միանալու առաջարկը: Մեր կոոպերատիվի շատ անդամներ կանայք են, միասին ուժեղ թիմ ենք կազմում: Կոոպերատիվում աշխատանքը խլում է մեր ողջ ժամանակը, սակայն ես կարողանում եմ ղեկավարել այն, քանի որ աշխատանքների մեծ մասը ամռանն են կատարվում, երբ դպրոցը փակ է: Իմ ամուսինն ինձ լիովին աջակցում է տան գործերի և երեխաների հարցում: Կարծում եմ, որ կոոպերատիվի մյուս կին անդամները նմանատիպ աջակցություն են ստանում իրենց ամուսիններից, որովհետև այս կանայք հիմնականում աշխատում են իրենց ընտանիքներին օգնելու համար: Ընդհանրապես, հավկած

եմ մտածելու, որ կանանց մասին կարծրատիպերը վերանում են: Շատ մարդիկ սկսել են մտածել, որ իրական կյանքը պահանջում է օգտագործել բոլոր հնարավորությունները ընտանիքի եկամուտը ավելացնելու համար: Ի դեպ, մենք ողջ գյուղն ենք կերակրում մեր լուրիով: Լավ հարաբերություններ ունենք և՛ համայնքի, և՛ գյուղապետարանի հետ: Պլանավորում ենք աջակցել գյուղին՝ համաֆինանսավորելով ջրի խողովակների անցկացումը:

Պատմությունները հավաքվել են «ՀՀ Տավուշի մարզում փոքր Ֆերմերների բարելավումը գյուղատնտեսական կոոպերատիվների և արժեքային զարգացման միջոցով» ծրագրի շրջանակում, որն իրականացվում է Օբսֆամի և իր գործընկերների՝ Բիզնեսի աջակցման կենտրոնի (BSC) և «Բանջարատեսակային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի» հետ համագործակցությամբ:

ãñ³ İ Ç Ý Ò³ Ý

Հայկական օրգանական սննդամթերքի մակնշումը երեք նշան պատկերն է

Հայաստանում կան 340 հազար ֆերմերային տնտեսություններ, որոնց 90 տոկոսը տեղեկացված չէ օրգանական սննդի մասին, թեև օրգանական գյուղատնտեսության զարգացումը գերակա և հեռանկարային ուղղություն է ճանաչվել մեր երկրում: Այս մասին մեզ հետ զրույցում ասաց Հայաստանում օրգանական սննդամթերքը սերտիֆիկացնող «Էկոլոգ» կազմակերպության իրմնադիր տնօրեն Նունե Դարբինյանը:



Նրա խոսքով՝ օրգանական է համարվում այն սննդամթերքը, որն արտադրվել է օրգանական ստանդարտով սահմանված պայմաններում: Չափանիշները խիստ են, սննդի արտադրության մեջ պետք է ոչ միայն բացառել բույսաբույսի միջոցառումները և զենետիկորեն փոխակերպված օրգանիզմների (ԳՓՕ) կիրառումը, այլ կիրառել էներգա-և ջրախնայող տեխնոլոգիաներ՝ դրանով իսկ նպաստելով բերքատվության բարձրացմանը: Օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող ընկերությունը հունցի ընդունման պահից մինչև պատրաստի արտադրանքի պահեստավորումը պետք է հավաստիացնի, որ իր արտադրանքը չի պարունակի ԳՓՕ, իսկ օգտագործվող հավելումների քանակը կլինի սահմանափակ:

Թեև Հայաստանում օրգանական գյուղատնտեսության զարգացումը մեծ հեռանկարներ ունի, այնուհանդերձ, առաջնությունը տեղափոխվել է դեպի: Մինչդեռ շատ երկրներում օրգանական գյուղատնտեսության հանդեպ պահանջարկը մեծ է, ուստի այդ ոլորտի զարգացման համար պետությունն աջակցում է ֆերմերներին:

Օրգանական արտադրանքն անպայմանորեն սերտիֆիկացվում է, որպեսզի գնորդի համար պարզ լինի, թե ով է այն արտադրել, ինչ պայմաններում, որ վայրերում: Այս հարցում կարևոր է պետության և լրատվամիջոցների դերը, սպառողը պետք է հավատ ընծայի «բիո», «էկո» և նմանատիպ մակնշումներով արտադրանքին միայն այն դեպքում, երբ առկա է օրգանական սերտիֆիկատը, և սերտիֆիկացնող մարմնի մասին տեղեկատվությունը գեներալված է պիտակի վրա: Հայկական օրգանական սննդամթերքի մակնշումը երեք նշան պատկերն է, սա է, որը պետք է ճանաչելի լինի սպառողին: Պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի այս նշանը բոլորին հասանելի դարձնելու համար, քանի որ շուկան լի է նաև կեղծ սննդամթերքով, բացի այդ, օրգանիկ արտադրանքի այս նշանը սահմանված է «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքով, որը, ցավոք, չի կիրառվում: Մինչդեռ, օրինակ՝ Գերմանիայում, մակնշումը գովազդելու համար մեծ գումարներ են հատկացվում, արդյունքում՝ գերմանացի սպառողը գնումներ կատարելիս առաջնորդվում է այդ նշանով:

«Էկոլոգ» այսօր ողջ տարածաշրջանում և հետխորհրդային երկրներում միակ սերտիֆիկացնող մարմինն է, որը հնարավորություն է տալիս օրգանական գյուղատնտեսական մթերք արտադրողներին իրենց ապրանքն արտահանելու և ճանաչելի դարձնելու գարգացած երկրների շուկաներում, ինչը Հայաստանի տնտեսության և հատկապես՝ գյուղատնտեսության զարգացմանը նպաստող հանգամանք է: Սակայն մեր գործունեությունն ինքնապատակ կլինի, եթե սպառողը տեղեկացված չլինի սերտիֆիկացված օրգանական արտադրանքի մասին», - ասում է Դարբինյանը:

